MIGHTY FISH & ALEX SAVE THE WATER



THE GOOD SEED PROJECT

HELIOS

Co-funded by the European Union

Հզոր Ձկնիկն ու Ալեքսը փրկում են ջուրը



Լինում է, չի լինում, մի փոքրիկ ձկնիկ է լինում, անունը՝ Գլուպսի-Գլուպսի։ Գլուպսի-Գլուպսին քաջ ու սիրունիկ ձկնիկ էր, որ սիրում էր փոքրիկ արկածների գնալ՝ մերթ մենակ, մերթ ընկերների հետ, իր հրաշալի հայրենի ջրերում։ Վերջին օրերին նա իրեն մի տեսակ լավ չէր զգում։ Ուժերը սովորականից շատ ավելի քիչ էին, ու նա թուլություն էր զգում։ Դա նրան շատ էր տխրեցնում, որովհետև թուլացել էին ոչ միայն ինքն ու ջրի բոլոր արարածները, այլև հիվանդ էր նրա շուրջը եղած ամբողջ բնությունը։ Նույնիսկ նրա սիրելի ջրիմուռներն էլ չէին աճում այնպես, ինչպես պետք էր։

Ամեն ինչ փոխվել էր։ Ձկնիկը շատ էր ուզում ինչ-որ բան անել ու օգնել իր համայնքին։ Մի առավոտ նա լսեց, որ ինչ-որ մեկն իրեն անունով է կանչում, բայց ձայնը կարծես հեռու-հեռվից էր գալիս, ու նա լողաց այդ կողմ։ Ձայնը գնալով մոտենում էր ու մոտենում, մինչև որ վերջապես ձկնիկը դուրս եկավ ջրի երես ու տեսավ մի փոքրիկ աղջկա, որ երգում էր ափին՝ գույնզգույն ծաղիկներով մի մեծ ծառի տակ։ Նա լողաց դեպի աղջիկն ու հարցրեց.



— Ո՞վ ես դու, ու որտեղի՞ց գիտես իմ անունը։

— Հը՞... Ես Ալեքսն եմ,— զարմացած ասաց աղջիկը։— Խելքս թռցրե՞լ եմ, թե՞ իսկապես խոսող ձուկ եմ տեսնում։

— Այո՛։ Իմ անունը Գլուպսի-Գլուպսի է։ Լսեցի, որ ինձ կանչում ես։

— Ես պարզապես երգում էի այն բառերը, որ գալիս էին մտքիս։ Այնքա՜ն ուրախ եմ, որ դրանք ինձ քեզ մոտ բերեցին։ Բայց դու կարծես տխուր ես։ Մի բան պատահե՞լ է,— անհանգստացած հարցրեց Ալեքսը։

— Ինքս էլ չգիտեմ։ Վերջին օրերին ինձ թույլ եմ զգում, իսկ իմ բոլոր սիրելի բույսերը թառամել են, ու չեմ հասկանում՝ ինչու։

— Ա՛խ, երանի կարողանայի մի բանով օգնել քեզ։

Թեև նրանք նոր էին ծանոթացել, Ալեքսը խորապես տխրեց իր նոր ընկերոջ դժբախտության համար։

Ալեքսը չգիտեր, բայց իր ետևի ծառը կախարդական էր։ Լսելով Ալեքսի ու Գլուպսի-Գլուպսիի հոգսերը՝ ծառը որոշեց մի


փոքր օգնել նրանց: Ու թափ տվեց իր ծաղիկների ծաղկափոշին ու փչեց Ալեքսի կողմը: Աղջիկը սկսեց անդադար փռշտալ ու... կամաց-կամաց ձկան վերածվել: Նրա մոտ խռիկներ ու լողակներ աճեցին, և նա բացականչեց.



— Վա՛յ: Այս ի՞նչ եղավ: Նայի՛ր, ես հիմա ձուկ եմ, ճիշտ քեզ նման: Հիմա կարող եմ օգնել քեզ: Միասին կփորձենք պարզել, թե ինչ է կատարվում քո ստորջրյա աշխարհում:

Գլուպսի-Գլուպսին չէր հավատում իր աչքերին. նա երբեք նման կախարդանք չէր տեսել:

Ալեքսն ու Գլուպսի-Գլուպսին սկսեցին լողալ այս ու այն կողմ՝ փորձելով գտնել, թե որտեղից է սկիզբ առնում փորձանքը: Ջրի մեջ նրանք նկատեցին մի տարօրինակ սև հետք ու գնացին դրա ետևից: Որքան հեռու էին գնում, այնքան մթնում էր ջուրը, ու այնքան ավելի էր նրանց գլուխը պտտվում: Ամբողջ օրը լողալուց հետո ճանապարհի մի անկյունում նրանք գտան մի հին քար: Քարը լուռ էր, բայց երևում էր, որ շատ ծեր է, ուրեմն ջրի պատմության մասին նրանցից շատ ավելին պիտի որ իմանար: Եվ նրանք մոտեցան քարին ու խորհուրդ հարցրին:



— Քա՛ր, քա՛ր, մեզ օգնություն է պետք: Գիտե՞ս՝ ինչ է կատարվում այստեղ,— ասաց Ալեքսը:

Եվ քարը, որի անունը Չակա-Չակա էր, պատասխանեց.

— Այս գետը մի ժամանակ մաքուր էր ու ջինջ, ինչպես աղբյուրի ջուր: Ձկներն ուրախ-ուրախ լողում էին կանաչ ջրիմուռների արանքում: Ամեն ինչ փոխվեց, երբ այստեղ մի խորհրդավոր դղյակ կառուցվեց:

— Դղյա՞կ,— զարմացավ Գլուպսի-Գլուպսին:— Ի՞նչ դղյակ:

— Այո՛,— պատասխանեց Չակա-Չական:— Մի քանի ամիս առաջ այստեղ մի դղյակ կառուցեցին, ու այն շարունակ կեղտոտ ջուր ու վնասակար քիմիկատներ է թափում մեր գետը: Հենց դա է աղտոտում ջուրը, ու մենք բոլորս հիվանդանում ենք:

— Բայց ինչո՞ւ են այդպես անում,— բարկացած հարցրեց Ալեքսը։

— Երբեմն մարդիկ մոռանում են, որ բնությունը մեր բոլորի ընդհանուր տունն է,— պատասխանեց իմաստուն քարը։

Ալեքսն ու Գլուպսի-Գլուպսին շնորհակալություն հայտնեցին Չակա-Չակային ու որոշեցին գտնել խորհրդավոր դղյակը, որ այդքան վնաս էր հասցնում գետին։ Որքան առաջ էին լողում, այնքան մթնում էր ջուրը, իսկ շուրջբոլորի բույսերը գնալով ավելի ու ավելի հիվանդ տեսք էին ստանում։

Հանկարծ նրանք նկատեցին, որ գետի հատակից վարդագույն պղպջակներ են բարձրանում։ Որոշեցին գնալ պղպջակների ետևից՝ անցնելով տարօրինակ արարածների ու բույսերի միջով։ Ու ճանապարհի վերջում տեսան այն՝ մի հսկայական դղյակ, որի երկու բարձր աշտարակները կորչում էին ամպերի մեջ։



— Չակա-Չական ճիշտ էր,— շշնջաց Ալեքսը։

— Հիմա գիտենք, որ դղյակն իսկապես կա։ Բայց ի՞նչ անենք հիմա։ Ի՞նչ է կատարվում ներսում։

Նրանք նայեցին իրար՝ հասկանալով, որ պետք է ներս մտնելու ճանապարհ գտնեն ու ճշմարտությունը բացահայտեն։ Երբ հասան դղյակի դարպասներին, Ալեքսը հանկարծ մի տարօրինակ խուտուտ զգաց։ Նա նորից սկսեց անդադար փռշտալ ու… նորից աղջիկ դարձավ։ Նրա կախարդական ձկնային օրն ավարտվեց, բայց արկածը դեռ նոր-նոր էր սկսվում։

— Գուցե այլևս չկարողանամ քեզ հետ լողալ, բայց անպայման կօգնեմ քեզ,— ասաց Ալեքսը Գլուպսի-Գլուպսիին։

Ալեքսն ամեն կերպ ջանում էր ճանապարհ գտնել թագավորի հետ անձամբ խոսելու, որովհետև հավատում էր, որ եթե բացատրի, թե դղյակն ինչքան վնասակար է գետի համար, թագավորը կդադարի ջուրն աղտոտել։ Վերջապես թագավորը համաձայնեց հանդիպել աղջկան։ Ալեքսը նորից բացատրեց նրան, թե ինչ աղետ է բերում աղտոտումը գետի բնակիչներին ու շրջակայքում ապրող բոլոր մարդկանց։ Նա նույնիսկ պատմեց Գլուպսի-Գլուպսիի հետ ունեցած իր արկածի մասին։ Թագավորը ցնցված էր՝ իմանալով, թե ինչ վնաս է պատճառել, ու անմիջապես դադարեցրեց գետի աղտոտումը, իսկ իր կախարդներին հրամայեց մաքրել ջուրը։



Կամաց-կամաց գետը նորից դարձավ բյուրեղի պես ջինջ, իսկ Գլուպսի-Գլուպսին վերագտավ իր ուժերը։ Այդ օրվանից թագավորը պաշտպանում էր գետը, իսկ Ալեքսն ու Գլուպսի-Գլուպսին մնացին ամենամտերիմ ընկերները։

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

ՎԵՐՋ